

ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԴԻՆԱԾԻԿԱ

ԿԱՄ

ՅԵՌԱՋՐՆԹԱՑՈՒԹԵԱՆ ՏԵՎՈՒԹԻՒՆԸ՝



Հասարակական լառաջընթացութեան էութիւնը պարզելու համար հարկաւոր է որոշել նրա ուղղութիւնը, արագութիւնը և առանձին տարրերի փոխադարձութիւնը:

Ուղղութիւն: Մարդը ի բնէ ունի բուսական, կենդանական և զուտ մարդկալին լատկութիւններ, այնպէս որ՝ մարդը մարդ լինելով, միևնուն ժամանակ կենդանի է և ոչ միայն կենդանի, այլ և միևնուն ժամանակ բոլո է: Կենդանական դասակարգի մէջ այն կենդանին է աւելի բարձր համարւում, որի մէջ բուսական լատկութիւնները համեմատաբար պակաս են, իսկ կենդանական լատկութիւնները աւելի: Այդպէս բարձրանալով հասնում ենք մինչեւ մարդը, որի մէջ բացի բուսական և կենդանական լատկութիւններից նկատւում են և որոշ մարդկալին լատկութիւններ, որոնք սական ուրիշ բան չեն, բայց եթէ կենդանական (մտաւոր և բարոլական) լատկութիւնների զարգացած աստիճանները: Այնպէս որ մարդկալին լառաջընթացութիւնը իսկապէս կողմում է կենդանական աշխարհի կատարելագործութեան շարունակութիւնը: Հասարակական կեանքի զարգացման նպատակն է՝ զերազանց աստիճանի հասցնել մարդկանական բարձր ընդունակութիւնները: Այդ նպատակը իրագործում է հասարակական կեանքը նրանով, որ մի կողմից ապահովելով մարդու ֆիզիկական (մարմնական) պահանջները, միջոց է տալիս նրան իւր հոգեկանին աւելի ուշ դարձնելու, իսկ միւս կողմից անմիջական ներգործութեամբ զարթնեցնում է նրա մտաւոր գործողութիւնները հասարակական զգացմունքը:

Արագութիւն: Թէ որպիսի արագութեամբ է կատարւում մարդու (մարդկութեան) կատարելագործութիւնը վերովիշեալ ուղղութեամբ, այդ կախուած է մի կողմից մարդու օրգանիզմի կազմակերպութիւնից և միւս կողմից մարդուն շրջապատող բազմաթիւ հան-

դամանքներից։ Եթէ օրինակ մարդու ուղեղը աւելի կատարեալ կազմութիւն ունենար, լառաջընթացութիւնը կը արագանար։ Կամ եթէ մեր երկրագունդը փոխէր իւր լատկութիւնները, ապա մարդկային լառաջընթացութիւնն էլ կ'արագանար, կամ կը դանդաղանար։ Աւելին ալղափիսի պալմանների ուսումնասիրութիւնը անհնար է *): Ուստի պէտք է բաւականանալ միայն երկրորդական հանգամանքները հետազօտելով։ Վերջիններիս վերաբերում են։

Չանձրութիւն գումը։ Մարդը իրան բաղդաւոր չէ զգում առանց իւր ընդունակութիւնը գործի դնելու։ Ամենալն դրութեան մէջ նա ձգտում է կատարել բաղդաւոր լինելու ալղ պալմանը։ Վայրենինները և երեխանները ձանձրութ չեն զգում, եթէ նրանց ֆիզիկական պահանջները արգելքների չեն հանդիպում։ Հեշտութեամբ վրայ հասնող և երկարատես քունը թուլ չէ տալիս նրանց, որպէս և անաստններին, ձանձրութ զգալու։ Բայց որքան աւելի մարդ քաղաքակրթւում է, այնքան աւելի ձանձրութ է զգում նա, երբ չէ ունենում հոգեկան վարժութիւններ։ Ուրեմն ձանձրութիւնը նպաստում է լառաջընթացութեան արագութեանը։

Միջին երկարակեցութիւնը։ Հասարակական լառաջընթացութիւնը շատ է կախուած մարդկային կեանքի երկար կամ կարճ լինելուց։ Մարդկութիւնը լառաջաղիմում է սերունդ առ սերունդ։ Իւրաքանչիւր սերունդ, ինչպէս և իւրաքանչիւր անհատ, որոշ քայլեր անելուց լիտով լոգնում ու կանգ է առնում և այլես ոչ մի նորութեան մասին լսել չէ կամենում, պահպանողական դիրք է ընդունում։ Ուստի նոր սերունդ է հարկաւոր, որ կոտրէ հնի լամառութիւնը և դարձեալ մի աստիճան բարձրացնէ կեանքը։ Եթէ մարդիկ չը մեռնէին և նորերը չը ծնուէին, գոլութիւն ունեցող միակ սերունդը որոշ քայլեր անելուց լիտով կը դնէր կեանքը կատարեալ անշարժութեան մէջ։ Ուրեմն մի որոշ երկրում կեանքի շատ երկար լինելը դանտաղացնող ներգործութիւն կանէ լառաջընթացութեան վրայ։ Բայց միւս կողմից կեանքի շատ կարճառեսութիւնն էլ նպաստաւոր չէ, որովհետեւ մարդու կեանքի մի նշանաւոր մասը կազմում են մանկական ու պատանեկական հասակը։ Խսկապէս լառաջաղիմութիւնը կատարում է ոչ պատանիների և ոչ էլ ծերերի ձեռքով, այլ անհատների ձեռքով, որոնք գտնւում են հասունութեան հասակում։ Եւ եթէ կեանքը ալնապէս կարճառեն լինէր, որ միայն

*.) Մեր կարծիքով՝ ալղ անհնար չէ։ Գիտական մետօղները զարգանալով հնարաւոր են դարձնում շատ բաներ, որոնք դարերի ընթացքում անհընար են համարուել։

քչերը վայելէին հասունութեան տտրիները, իհարկէ ընդհանուր լաւաջընթացութիւնը կը կազէր:

Աղգաբնակութեան աճեցողութիւնը՝ Որքան խիտանում է աղղաբնակութիւնը, այնքան աւելի ստիպուած են լինում մարդիկ ապրուստի նոր և նուրբ միջոցներ հնարելու, որովհետեւ հախկին միջոցներով ապրելը անհնար է դառնում: Բայց այդ հասարակութիւնը ստիպուած է լինում աւելի եւանդուն կերպով մարառելու մասնաւոր անհամաձայնութիւնների դէմ: Մտաւոր ու բարոլական ոլժերը աւելի ու աւելի նշանակութիւն են ստանում: Նոր գիւտեր անելու բնազդումը աւելի ու աւելի զօրեղանում է: Աղղաբնակութեան աճեցողութեան աղղեցութիւնը նման է կեանքի տեղականութեան աղղեցութեանը: Զափաղանց աճեցողութիւնը նոյնպէս կարող է վեասել լառաջընթացութեանը, կեանքը նեղ ու ճընշուած դրութեան մէջ դնելով: Բայց թուլ աճեցողութեան գէպքումն էլ մարդկալին միտքը թմրում է, զերծ լինելով դրդիչ հանդամանքներից:

Այժմ տեսնենք թէ ինչ լարաբերութիւն կաէ լառաջընթացութեան զանազան տարրերի մէջ: Մարդկալին զարգացողութեան տարրերի մէջ զեկավարող զերը սլատկանում է խելքին: Թէև խելքի արթնանալու համար էլ անհրաժեշտ է ֆիզիկական պահանջների, կըրքերի և զգացումների աղղեցութիւնը, այնուամենասկնիւ ընդհանուրապէս խելքն է ամբողջ լառաջընթացութեան զեկավարող ոլժը: Հասարակական կազմակերպութիւնը կախուած է մարդկանց զանազան հալեացքների գումարից: Այդ հալեացքների փոխուելը զօրեղ կերպով աղղում է կեանքի վրաէ, փոփոխում է մարդկալին կեանքը: Այնպէս որ ընդհանուրապէս կեանքի լառաջընթացութեան մասին ուղիղ գաղփար կազմելու համար, մենք սկսուի ուշադրութիւն զարձնենք մտքի (որպէս զեկավարի) լառաջընթացութեան վրաէ: Մտքի զարգացման սլատմութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ ֆիլիսօփալութեան սկասմութիւնը Ռւբեմին կեանքի ընդհանուր լառաջընթացութեան վերլուծութիւնը կարելի է ըմբռնել, ուսումնասիրելով ֆիլիսօփալութեան (մտաւոր կամ հոգեկան զարգացման) սկասմութիւնը:

Մտքի կամ հոգեկան զարգացման զլխաւոր օրէնքը, որը արդէն լիշել ենք, կախանում է նրա մէջ, որ մարդկալին միտքը իւր զարգացման ընթացքում անցնում է երեք աստիճաններ՝ առառածարանական, բնաղանցական և դրական, ալսինքն նա ունենում է լաջորդաբար երեք տեսակ աշխարհականացք՝ վերոլիշեալ աստիճանների համեմատ: Այդ երեք աշխարհականացողութիւնքը, որ սպորտաբար միաժամանակ գոլութիւն են ունեցել և ալժմ էլ գոլութիւնն ունի,

դտնուել են անընդհատ զարդացման դրութեան մէջ։ Բայց նրանցից իւրաքանչիւրն որոշ դարեշրջանում գլխաւոր տեղն է բռնել, ափրապետող ոլժ է հանդիսացել։ Իւրաքանչիւր մտաշրջանին համապատասխանում է հասարակական ու քաղաքական մի որոշ դրութիւն։ Այսինքն աշխարահակեցողութեան տեսակը փոխուելուց, փոփոխութեան է ենթարկում և ընդհանրապէս հասարակական ու քաղաքական կեանքը։

Կարճ կերպով կը ծանօթանանք երեք դարեշրջանների հետ։

1. Աստուածաբանական դարեշրջան։ Բնութեան երեսով հասկանալու համար, մարդը ամեն բան համեմատում է իւր անձնաւորութեան հետ, իւր սեփական չափով։ Է չափում։ Նա կարողանում է բացատրել իւր անձնական գործողութիւնը, գիտէ թէ ինչու համար ինքը բարկանում է, ինչն է իւան դուր դալիս, մի խօսքով իւր զգացումների մասին դաղափար ունի։ Աղջպէս էլ մտածում է ընութեան ուրիշ արարածների կամ երեսով թների մասին։ Երբ օրինակ ծովը ալեկոծւում է, մարդը եղրակացնում է, թէ նրա մէջ ինչ որ արարած կաէ, որը որոշ պատճառներից բարկացել է։ Նոյնպիս բացատրութիւն է տալիս փոթորկին, կալծակին և այլն։ Եւ առհասարակ նա բացատրում է շրջապատող երեսով թների բնաւորութիւնը ու ծագումը, նմանեցնելով իւր սեփական գործողութիւններին բնաւորութեան ու ծագման։ Նա որոնում է բոլոր երեսով թների մէջ արարածներ, որոնք մարդու նման կամք ունին և նոյն իսկ աւելի զօրեղ կամք, որովհետեւ աւելի զօրեղ կերպով են արտավագտում (օրինակ կալծակը)։ Այսաեղից ծագում է աստուածաբանական մուածողութիւնը։

Աստուածաբանական աշխարահակեցողութիւնը օգտակար է ընդհանուր լառաջընթացութեան՝ մտաւոր, բարոլական և հասարակական մասնակիւններից։

Ակզբում մարդը չէր կարող ընդհանուր, դրական, աշխարահակեցողութիւն կազմել, որովհետեւ նա դեռ չէր ուսումնասիրել առանձին մասնաւոր երեսով թները։ Իսկ առանձին մասնաւոր երեսով թները ուսումնասիրելու համար, մարդկալին միտքը պիտի նախապէս ունենալ մի որոշ հայեացք, մի ընդհանուր դաղափար, որով պիտի զեկավարուէ իւր հետազօտութիւնների ասպարիզում։ Աղջպիսով մարդկալին միտքը սկզբում զանուելիս է եղել մի տեսակ կախարդուած շրջանի մէջ, որից դուրս դալու համար ծառակել է աստուածաբանական աշխարահակեցքը։ Վերջինս ուրեմն մի տեսակ հիմնաքար է եղել՝ մասնաւոր ուսումնասիրութիւններին անցնելու համար։

Բարոլական տեսակէտից աստուածաբանական աշխարհանակեցողութիւնը այն օգուտն է ունեցել, որ ներշնչել է մարդուն եռանդ, ինքնավոտահութիւն։ Համարելով, թէ բոլոր երեսութները զեկավարողները իւր նման կամք ունեցող արարածներ են, նա հաւատացած է եղել, թէ հարկաւոր դէպքում խնդիրքներով (ազօթք) և զոհաբերութիւններով կը կարողանալ իւր օգտի համեմատ փոփոխել տալ երեսութները։ Եթէ մարդը հէնց սկզբից հաւատացած լինէր, որ ամեն բան կատարւում է որոշ օրէնքներով, որ որոշ պատճառներից անխուսափելի կերպով առաջ են գալիս համապատասխան երեսութները, ապա նա կը վհատէր և չէր կարող դուրս գալ իւր մտաւոր թմրածութիւնից։ Ներկայ մարդկութիւնը սովորել է տիրապետել բնութեանը, ծառալեցնել նրան իւր օգտին, առանց լոլո դնելու վերացական ոլժերի վրայ։ Իսկ սկզբնական մարդիկը չունէին դեռ ալդ վարժութիւնը և նրանց եռանդը բոլորովին կը կորչէր, եթէ լոլո ը դնէին վերացական ոլժերի աջակցութեան վրայ։

Հասարակակազմութեան տեսակէտից աստուածաբանական աշխարհայիցողութիւնը երկու օգուտ է բերել։ Նախ որ նա ստեղծել ու զեկավարել է հասարակական կազմակերպութիւնը և երկրորդ որ նա առաջ է բերել մասնաւորապէս մտաւոր զբաղմունք ունեցողների դասակարգ (հոգենորականութիւն)։

Որպէս զի մի հասարակութիւն հաստատուն կազմակերպութիւն ունենալ, անհրաժեշտ է, որ նա ենթարկուած լինի մի ընդհանուր աշխարհայիցողութեան։ Որքան էլ որ մարդիկ չսիրեն չարդեն միմեանց, որքան էլ նրանք ընդհանուր շահերով կապուած չեն իրար հետ, այնուամենանիւ նրանք չեն կարող ամուր հասարակութիւն կազմել, եթէ մի ընդհանուր գաղափար, մի ամուր հալեացք չէ միացնում նրանց իրար հետ։ Ահա ալդպիսի դեր է խաղացել աստուածաբանական սկզբունքը հին աղդերի համար։

Ինչ վերաբերում է մտաւոր դասակարգին, սրա օգտակարութիւնը ակներե է։ Հասարակական կեանքի սկզբնական դրսւթեան մէջ, երբ հասաւ ակութիւնը բաղկացած էր միայն զինուորներից և զերիներից, չէր կարող առաջանալ մի դասակարգ, որը ազատ լինելով զինուորական ու տնտեսական աշխատանքներից, կարողանար նուիրուել մտաւոր ասպարիզին։ Բայց աստուածաբանական ուղղութիւնը կարողացաւ ոչ միայն ստեղծել մի ալդպիսի դասակարդ, ալլեւ բարձրացնել նրա հեղինակութիւնը ժողովրդի աչքին։ Քրիմական դասակարգը, չը նախելով քուրմերի մութ ու պղտոր մտաւոր աշխատանքին, այնուամենանիւ հիմք դառաւ ապազալի մտաւոր դասակարգերի համար։ Հակառակ դէպքում մտաւոր լառաջըն-

թացութիւնը հէնց սկզբից կանգ կառնէր։ Մտաւոր զարգացման համար անհրաժեշտ էր, որ զուութիւն ունենար մի զասակարգ, որը ազատ լինէր տնտեսական հոգսերից և իւր դիրքի համեմատ ստիպուած լինէր պարապելու մտաւոր աշխատութեամբ։

Աստուածաբանական դարեշրջանում որոշ կերպով նկատում են երեք ժամանակամիջոցներ, կռապաշտական, բաղմաստուածական և միաստուածական։ Վկղբում, երբ մարդկանց կարծիքով ամեն տեղ և ամեն ժամանակ տարածուած են վերացական ոլժերը, աստուածաբանական մտածողութիւնը բոլորովին կաշկանդում է մարդկանց մտքերը։ Երկրորդ ժամանակամիջոցում առաջ է դալիս քըրմութիւնը (կռապաշտական հոգնորականութիւնը), կառավարութիւն է կազմակերպում և ամբոխը գերի է դառնում։ Բայց այդ ժամանակամիջոցը առաջնից աւելի նպաստաւոր է հանդիսանում մտաւոր և տնտեսական լառաջադիմութեան համար։ Այդ դարեշրջանում արդէն սկսեց տարածուել Եգիպտոսում և Ասորեստանում միաստուածութեան գաղափարը։ Աւելի ևս՝ բնաղանցական աշխարահայեցողութիւնը խոր արմատներ զցեց լունական փիլիսօփալութեան մէջ։ Մինչև անգամ դրական մտածողութիւնը արտալալուեց Արխատուելի, Արքիմիղէսի և Հիպակարխի աշխատութիւնների մէջ։ Իսկ երբ հրէական միաստուածութեան գաղափարը ներս մտաթունաստան և խտալիս և խորտակեց հեթանոսական աստուածներին, ապա լառաջ եկաւ նոր հոգնորականութիւն։ Բազմաստուածութեան աեղը բռնեց միաստուածութիւնը։ Վերջին ս երկու մեծ ճիւղերը կտրուեցին զլխաւոր բռնից և կազմեցին լունական եկեղեցին Արևելեան Եւրոպալում և մահմետական կրօնը Ասիալում և Աֆրիկալում։ Այդ երկու ճիւղերը, ի հարկէ, նոլնպէս միաստուածութիւն էին դաւանում, բայց իրանց հոգեկան զարգացմամբ ընդհաննում էին մաքառելու կաթօլիկութեան մէջ մարմնացած բարձր մտաւոր ոլժերի դէմ։ Կաթօլիկութեան էր վիճակուած՝ կատարելագործել միաստուածական և ընդհանրապէս աստուածաբանական աշխարահայեցողութիւնը և լետով իւր կողմից ընկճուել նոր ծագող բնաղանցական կամ ազատ քննաղատութեան զօրութեան առաջ։

Աստուածաբանական մտաշրջանին համապատասխանում է զինուորական կենսաշրջանը։ Սա պատուաստում և զարգացնում է կարգը, կարգապահութիւնը (զիսցիպլինան), որոնք քաղաքական կազմակերպութեան անհրաժեշտ պալմաններն են։ Ոլժերը կենտրոնանում են ստիպողական և անհրաժեշտ ընդհանուր նպատակների շուրջը։ Ինչպէս առաջին հոգեկան հեղինակութիւնը պիտի աստուածաբանական լինէր, նոլնպէս էլ առաջին կառավարութիւնները

պիտի զինուորական լինէին։ Միայն արտաքին ոլժը կարող էր հաւաքել մարդկանց միատեղ և ի մի պահել։ Եւ միայն պատերազմի միջոցով է աճում հասարակութիւնը զարգացման աւելի վաղ աստիճաններում։ Պատերազմի հետևանքը լինում է ստրկութիւնը։ որպէս զի զինուորականները կարողանան ազատ կերպով գործադրել իրանց ոլժերը, տնտեսական գործերը պիտի կատարուէին ստրուկ-ների ձեռքով։

2. Կաթօլիկական կազմակերպութեան ահեղ զօրութիւնը, որ այնպէս տիրապետում էր միջին դարերում, խորտակուեց միմեանց եւ եից երեան եկող բարեկարգիչների հարուածների տակ։ Տասնուշորս ու տասնուհինգերորդ դարերում քննադատական շարժումը ոչ մի չափ ու սահման չէր ճանաչում, իսկ նախընթաց երեք դարերում խառնակութիւնը կատարեալ եղաւ և իւր գաղաթնակէտին հասնելով լառաջ բերաւ ան բացասական ուղղութիւնը, որը երկար ժամանակ տիրապետում էր հասարակական, քաղաքական և կրօնական խնդիրների մէջ։ Ամեն բան բացասում էին, ամեն բան քանդում էին, տեղը ոչինչ չդնելով։ Ուղ բացասական փիլիսոփական իսկական հաւըրը Հօրբան էր, որին կողմնակից էր անգլիացի Լոկիկը։ Իսկ ծալրակեղութեան հասաւ նա Ֆրանսիայում Վօլտերի, Բուսսօի, Հէլվեցիի և Դիդրոի գրուածքների մէջ։ Կրօնական ասպարիզում բողոքականութիւնը, իւր «անաստուածաբանական» սկզբունքներով այնպէս վարակեց հիւսիս-արևմտեան Եւրոպան և իտալիան, որ պապի բարձրագործ իշխանութիւնը բոլորովին փչացաւ, Քաղաքականութեան մէջ վարչական սանձերը անցան կրօնագէտների ձեռքը և տարածուեց արդարէս անուանուած իմաստակապետութիւնը։ Տնտեսական ասպարիզում լառաջացան ոսցիալական ալնպիսի սիստեմներ, որոնք ցնորական բնաւորութիւնունէին և կատարեալ էին դարձնում ընդհանուր անիշխանութիւնը։

Բնագանցական մտաշրջանին համապատասխանում է սօցիալական և քաղաքական ասպարիզում այն շրջանը, ուր տիրապետող տարրերն են իրաւաբաններինը։ Նախկին լարձակողական-զինուորականութեան փոխարինում է պաշտպանողական—զինուորական կազմակերպութիւնը։ Պատերազմական ոգին հետզհետէ տեղի է տալիս արդիւնագործական ոգոն։ Միջին դասակարգերը առաջ են ընկնում և քաղաքուկան իրաւունքներ են պահանջում։ Տիրապետող իրաւաբանների պարտքն է լինում զանազան պահանջների համեմատուկան գնահատութիւնը։ Այն ժամանակամիջոցը, որի մէջ մենք գտնում ենք—անկայուն և անհանգիստ անցողական տարեշրջանն է։

3. Արդ խառնակութեան վերջ է դնում լառաջաղիմութեան

դրական դարեշրջանը։ Նա սկիզբ է առնում Բէկօնից, որը որոշեց դիտողականութեան և փորձնական հետազօտութեան կանօնները։ Գալիլէի, որ նրանից երեք տարով փոքր էր, առանց նրա հետ ծանօթ լինելու, զործադրութեան մէջ մտցրեց նրա կանոնները, վըճռելով աստղաբաշխութեան և ֆիզիկալի մեծամեծ խնդիրները։ Քառորդ դար լետոյ Դեկարդը, որ լաւ ծանօթ էր Բէկօնի և Գալիլէի աշխատութիւնների հետ, միացրեց նրանց բոլոր եղրակացութիւնները մի ֆիլիսոփալութեան մէջ, որ իսկական դրական բնաւորութիւն ունէր։ Ալդ օրուանից սկսեցին իսկական գիտութիւնները ծաղկել և երեք դարերի ընթացքում կատարելապէս կերպարանափոխեցին կեանքը։ Ալդպէս ուրեմն արդէն զուութիւն ունէր դրական մեթոդ, հետազօտութիւնը, գիտութիւնը, կօնտին վիճակուած էր միայն՝ գիտել մտքի պատմութեան մէջ ալդ մեծ փոփոխութիւնների ընթացքը, որոշել նրանցից իւրաքանչյուրի տեղը, նշանակութիւնը և ամբողջութիւնը մկրտէր պատշաճաւոր անուն տալով։ Ալնալէս որ յառաջադիմութեան դրական շրջանը ստացաւ իւր իսկական ամբողջական նշանակութիւնը տասնուիններորդ դարի սկզբում մանաւանդ կօնտի մասնակցութեամբ։

Դրական աստիճանին համապատասխանում է արդիւնագործական դարեշրջան, որի մէջ հիմնարկութեանց կարգը և իշխողական իրաւունքները որոշուում են արդիւնաբերական ուժերով։ Քաղաքական հարցերը փոխարինուում են հասարակական խնդիրներով։

Սեփականազուրկ տարրերը փոքր առ փոքր ըմբռնում են, որ քաղաքական լեղափոխութիւնները անկարող են վճռելու ալն մեծամեծ հասարակական խնդիրները, որոնց խալթոցը ինքեանք զգում են բոլոր միւսներից աւելի։ Կատարելապէս հասկանալի է, որ նըրանք կը համակրեն դրական ֆիլիսոփալութեան ձգտումները, որ է պարտաւորութիւնները իրաւունքներից բարձր դասել, որպէս զիշնդիանուր ուշադրութիւնը ուղղուի դէպի ալն խնդիրների լուծումը, որոնց կարելի է հասարակական անուանել բառի բուն նշանակութեամբ։ Որ է՝ ամենքի համար հնարաւոր դարձնել հոգեկան զարգացումը և ճանաչել ամենքի իրաւունքը աշխատանքի վրա։ Ուստի սեփականազուրկ տարրերը և դրական ֆիլիսոփալութիւնը միշտ բնականօրէն փոխադարձաբար կը հասկանան իրար։

Մարդկութեան ալդպիսի համերաշխ դարգացումը մեծ նշանակութիւն ունի։ Մրանով ամրանում է հասարակական զգացումը։ Մարդու մէջ զարգանում են մասնաւորապէս մարդկանական լատկութիւնները՝ խելացիութիւնը և ընկերականութիւնը։ Վատ բնազ-

դումները հետզհետէ թուլանում են՝ մասամբ ինքնատիրութեան շնորհիւ, մասամբ նրանց մէջ հարկաւորութիւն չունենալու պատճառով։

Մարդկութեան ապադան կախուած է իրանից։ Մարդկային առաջընթացութիւնը շատ կարագանալ, եթէ հասարակական երևոլթները ալնպէս պարզուեն, մշակուեն, որպէս օրինակ մարդակաղմական, Փիղիկական, Քիմիական երևոլթներին, հնարաւոր է լինում բժշկել տկարմարմինը կամ աւելի ամրացնել նրան։ Նոյնպէս էլ հասարակագիտութիւնը մշակելով, միջոցներ կը գտնուին՝ լառաջընթացութիւնը աւելի հաստատուն ու զօրեղ հիմունքների վրայ դնելու համար։

Ս. Թառայնան

